ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Վերջին երեք տասնամյակների ընթացքում (1990-2020թթ.) պահպանվել են գրեթե 50 տեսակի թռչուններ և կաթնասուններ, որոնք գտնվում էին անհետացման եզրին, որոնցից 25-ը միայն վերջին տասնամյակում: : Ըստ ՄԱԿ-ի Պարենի միջազգային ծրագրի երկրագնդի ֆերմաների գրեթե մեկ երրորդը (163 միլիոն), օգտագործում է էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մեթոդներ: Անտառահատումների մակարդակը նվազել է 33 տոկոսով: Ներկայումս վերականգնվում է 27 մլն հեկտար հողատարածք: Փորձագետներն ընդգծում են, որ այս բոլոր թվերը վկայում են այն մասին, որ իրավիճակը անհուսալի չէ, և միջազգային հանրությունը կարող է կրկնապատկել իր ջանքերը կենսաբազմազանության պահպանման և պաշտպանության համար: Այս գործում անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: